

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ԸՂԹԹՔ ՄԱՆՁԷՍՏՐԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ.

Ուէլսըն եպիսկոպոսի հառգը

Հոկտ. 17-ին Մանչեստրի մայր եկեղեցում իրիկուան աղօթքին ներկայ են եղել Եւրոպայի հայոց առաջնորդ Իւթիւճեան արքեպիսկոպոսը և Մանչեստրի հայ գաղութը: Քարոզի ժամանակ Ուէլսըն եպիսկոպոսը ասել է հետևեալը.

«Իմ կարծիքով ներկայ պատերազմի բազմատեսակ արհաւիրքների մէջ ոչ մէկ աւելի անգութ, աւելի հակամարդկային և, կարող եմ ասել, աւելի դիւային գործ է եղել, քան Հայաստանի արիւնագարդ կոտորածները: Թիւրքերը թելադրուել են սրբելու հայ ժողովուրդը աշխարհի երեսից. դա բառացի և բացարձակ ճշմարտութիւն է: Լորդ Բրայս, որ Անգլիայում Հայաստանը ամենալաւ ճանաչողն է, վերջերս հաշուել է, որ անցեալ 6 ամիսների ընթացքում սպանուած հայերի թիւը հասնում է 800,000-ի:

«Թորին համակրութեամբ մենք ողջունում ենք հայ հասարակութեան ներկայացուցիչները այս տաճարի ս. պատերի մէջ: Կան շատ հետաքրքրական կապեր հայկական և մեր եկեղեցու միջև: Գրեթէ երկու տարի առաջ, երբ յոյն եկեղեցու և ազգի ներկայացուցիչները այցելեցին այս մայր եկեղեցին, ես համարձակեցայ պնդել Արևելքի քրիստոնեայ եկեղեցիների պատմական նշանակութիւնը ուսումնասիրելու արժէքը: Այդ եկեղեցիներից շատերը, բայց ոչ ամենքը, միջնադարդութեամբ միացած են իբրև բաղկացուցիչ անդամներ Արևելեան Ուղղափառ սրբա-

զան եկեղեցուն, որ իր ծոցում հաշւում է, կարծեմ, ոչ պակաս քան 150,000,000 քրիստոնեաներ: Անդլիական եկեղեցու պէս նրանք ազգային եկեղեցիներ են. նրանք եպիսկոպոսական եկեղեցիներ են, ինչպէս մեզ յիշեցնում է այդ՝ այս զիշեր, հայ արքեպիսկոպոսի ներկայութիւնը: Նրանք Հռոմի եկեղեցուց աւելի հեռու են, քան բուն ինքը անդլիական եկեղեցին, որովհետեւ նրանց բովանդակ կեանքը անկախ է եղել Հռոմի պապական անթոռից:

«Հայաստանը պնդում է, որ ինքը, բոլոր ազգերի մէջ առաջինն է եղել քրիստոնէութիւնը իբրեւ ազգային հաւատք ճանաչելու գործում: Նա իր երկար պատմութիւնը գծում է մինչև ս. Թադէոս և ս. Բարդուղիմէոս առաքեալների օրերը: Բովանդակ քրիստոնեայ աշխարհում նա ծանօթ է որպէս ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցի: Տասն և վեց դար նա անասելի կեղեքումների և հալածանքների միջով պահել է իր դաւանանքի ամբողջականութիւնը, որպէս ներկայացուցիչ թաշին՝ ընդդէմ Մահիկի: Եւ այժմ իր դերադոյն հոգեվարքի ժամին, նա իր սրատուշ փառահռութիւնը դարձնում է դէպի իւր քոյր եկեղեցիները, որոնք այնչափ մօտ են իրեն հաւատքով և վարդապետութեամբ և այնչափ տարբեր՝ հալածանքներից երկար ժամանակ ազատութիւն վայելելու գործում. այժմ նա յառել է իր աչքերը արեւմտեան քրիստոնեայ եկեղեցիներին: Ուրեմն խօսելով յանուն այստեղ համախմբւած այս մեծ բաղմութեան և Մանչէստրի ճշմարտապէս քրիստոնեայ մարդկանց և կանանց, ես հաւաստիացնում եմ ձեզ, հայաստանցի իմ քրիստոնեայ եղբայրներ, որ մենք ձեզ հետ մէկ ենք սրտով ու հոգով: Մենք զգում ենք ձեր տառապանքների դառնութիւնը՝ որպէս թէ մենք էլ տառապած լինէինք ձեզ հետ: Եւ եթէ հնարաւոր է, որ ձեր ազգային պատմութեան այս դերադոյն բոլէին մեր աղօթքը, մեր համակրութիւններն ու աջակցութիւնը ձեզ կարող է բերել արուփանք և օգնութիւն, մենք տալիս ենք դրանք և պիտի տանք մինչև վերջը»:

Ուէլտըն եպիսկոպոսը, Մանչէստրի մայր եկեղեցու աւագերէցը, 80-ամեայ մի առոյգ եպիսկոպոս է, յայտնի հասարակական գործիչ և տարիներով պայքարել է հայկական դատի օգտին:

Արեակ Սամբուսեան

«Հորիզոն»

ՖՐԱՆՍԻԱՅԻՆ ԵՐԻ ԿՈԶԸ ՀԱՅԵՐԻՆ,

ՆՊԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Փարիզարեակ անուանի ֆրանսիացիներ իրենց ստորագրութեամբ հետևեալ կոչը ուղղած են բոլոր ֆրանսիացիներին, թշուա հայերին օգնութեան համակուհամար. —

«Յայտնի է, որ հայերը որոշ ծրագրի մը համեմատ կը կոտորուին թիւրք կառավարութեան հրամանով, որ Ապաիւլ Համիտի ձեռնարկը կը շարունակէ անգթութեան աւելի վարպետ ձեւերով:

Երկու հարիւր յիսուն հազարէն աւելի հայեր, որոնց մէջ խիստ շատ որբեր կան, մահէն խուսափելու համար ստիպուեցան Ռուսիա դադթել: Անոնք այսօր ծանրացած են Կովկասի հայերին վրայ և հակառակ ուստ իշխանութիւնների բարի կամեցողութեան, իրենց վիճակը շատ խախուտ է: Օրական հարիւրաւորներ կը մեռնին:

Վերջապէս բոնի մահէն կը փախչին թշուառութեան և քաղցի երեսէն դանդաղ կերպով մեռնելու համար միայն:

Արդէն Անդլիայի մէջ կազմուած է մարմին մը, օգնութիւն դրկելու համար գաղթական հայերին: Ֆրանսիան չկրնար անտարբեր մնալ. ան. ալ պիտի ապացուցանէ անգամ մը ևս իր աւանդական առատաձեռնութիւնը, իսկոյն օգնութեան համակուծ հալածուած ժողովրդի մը դժբաղդ վերապրողներին:

Պիտի շանանք նոյնպէս օգնութիւն հասցնել անոնց,

որ Թիւրքիայէն դուրս ելնել չկրնալով հանդերձ խուսափած են մէթոսիկ բնաջնջումէ մը»:

Այս կոչը ստորագրւած է հետևեալներէն.

Անարայ ժրանս, Վիգոր Պէրար, Ֆէրսինան Պիսսոն, Ժ. Գլէմանսօ, Ֆէրսինան Հէրօլս, Կիւսսաւ Երվէ, Ժերակոսական Տ'էթուրնէլ Տը Գոնսդան, ժրանսական Գոլէնի պրօֆէսէօր Ա. Մէյլէ, Փարիզի քաղաքապետական խորհրդի նախագահ Ասքիէն Միհուառ, Տիկին Մէնար Տօրիան, Երեսփոխաններ՝ Մարսէլ Գաւէն, Ա. Կալի, ժրանփին-Պուլետօն, Ժան Լըրօլ, Ժօրժ Լէյկէ, Ժան Լոնկէ, Մարիուս Մոդէ, Ժազ Փիու եւ այլն:

(«Աւմէնիա»)

ՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Վանի շրջանի Յուլիսեան մեծ գաղթի ժամանակ մեծ շափով փնասուել են վանքերի և եկեղեցիների թանկագին եկեղեցական անօթները, իրերն և ձեռագրերը, որոնցից շատերը ենթարկուել են մութ անձանց ձեռքով թալանի և ոչնչացման: Իւր ժամանակին Վեհափառ Կաթողիկոսի կողմից կարգադրութիւն է եղել կարևոր իրերը և ձեռագրերը փոխադրել ս. էջմիածին, և այդպէս էլ արուած է — ձեռագրերի և իրեղէնների որոշ մասը վանքերից և եկեղեցիներից փոխադրուած են արդէն ս. էջմիածին, որոնց ցուցակը կը հրատարակուի «Արարատ»ում:

Միւս կողմից Պետրոգրադի Շեմարանն ևս կարգադրել է ազատել այդ հսութիւնները պատահական կորստից և այդ նպատակով ուղարկել է Կովկասեան պատերազմաբեմը և յատկապէս Վանի շրջանը պ. Սմբատ Տէր Աւետիսեանին որոշ հրահանգներով:

Պրն. Տէր Աւետիսեանը այդ առթիւ գրում է Վեհափառի Դիւանապետին հետևեալը: «Դիտութեան Շեմարանի որոշ-

ման համաձայն և Տ. Փոխարքայի հրամանով երկու օրից ճա-
նապարհուելու եմ Կովկասեան պատերազմարեմք, առանձ-
նապէս Վանի շրջանը, յատուկ հրահանգ ունենալով զե-
կուցադիր կազմել պատմական-կուլտուրական յիշատակա-
րանների վիճակի և այն մասին, թէ ինչքան նորա փաստել
են ու աւերուել ներկայ պատերազմի ժամանակ, տեղն-
ուտեղը կարգադրել նոցա պահպանութեան մասին և մի-
ջոցներ ձեռք առնել այդ յիշատակարանների գոյութիւնը
ապահովելու համար: Բնականաբար ևս յաճախ դորժ
պէտք է ունենամ եկեղեցական հնութիւնների հետ. և
որպէսզի եկեղեցու իրաւունքները իբրեւ սեպհականատիրոջ
խախտուած շլինին, ևս կարծում եմ, ցանկալի կը լինէր,
որ Վան գնացած վարդապետներից մէկին Վեհափառը
լիազօրէր ու նշանակէր իբրեւ ներկայացուցիչ հոգևոր իշ-
խանութեան, որի հետ միասին իրերը ցուցակադրելուց
յետոյ կարելի կը լինէր ուղարկել էջմիածին կամ Թիֆ-
լիզի առաջնորդարանը, որտեղ որ ապահով կը համարէք:
. իրերը կրկնքուին թէ վարդապետի և թէ
այդ մասին կարելի է մի քանի ձեռնհաս անձանց կնիքով
ու անփաստ կը համենն Ձեզ ցուցակով ստանալու համար:
. Քնդրեմ նամակս արժանացնէք Վեհափառ Հայրա-
պետի ուշադրութեանը՝ որպէսզի այդպիսով վերացած
լինի ամեն մի թիւրիմացութիւն»:

Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ Հայրապե-
տական Դիւանն կարգադրութիւն է անում և գրում պ.
Ս. Տէր Աւետիքեանին հետևեալը. «Ձեր տարւոյս նոյեմ-
բեր 2-ից դրած նամակի բովանդակութեան մասին զե-
կուցանելով նորին Սուրբ Օծութեան՝ նորին Վեհափա-
ռութեան հաճելի եղաւ կարգադրել, որ Վանի շրջանում
կատարած Ձեր հնագիտական քաղաքակրթական հետա-
զօտութիւնների և որոնումների ժամանակ նշանակուի իբրեւ
ներկայացուցիչ Լիւս անասպատի վանահայր Տ. Յովհաննէս
վարդապետը: Այս մասին Հայրապետական Դիւանս յայտ-
նելով Ձեզ ի գիտութիւն յանձնարարում է՝ որ որոնած և
գտած հնագիտական բոլոր իրեղէնները մեծ ու փոքր

ձեռագրերը, եկեղեցական հնագիտական արժէք ունեցող սպասներն ու զարդերը մանրամասն ցուցակագրուին և ցուցակագրելուց յետոյ կնքուին հոգևոր իշխանութեան ներկայացուցչի և Ձեր կնիքներով և պահակների ապահով հսկողութեան տակ փոխադրուին ուղղակի ս. Էջմիածին և ոչ Տփլիս: Իւրաքանչիւր անգամ երբ պահակների ձեռքով կուղարկուեն կնքուած արկղներ կամ կապոցներ, անհրաժեշտ կըլինի և Ձեր գրութեան հետ նաեւ իրերի ցուցակն ուղարկել ի ստուգութիւն»:

Նոյն մտքով Հայրապետական Դիւանից դուռն է Լիմ անապատի վանահայր Տ. Յովհաննէս վարդապետին՝ յայտնելով Դիտութեանց ձեւարանի ներկայացուցիչ Սմբատ Տէր Աւետիսեանի առաքելութեան նպատակը, պատուիրելով աջակցել նորան և յայտնելով. «... Ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճեց նշանակել բարձրապատուութեանդ իբրեւ ներկայացուցիչ հոգևոր իշխանութեան, արտօնելով և լիազօրելով Ձեզ միշտ ներկայ լինել իրերի, յիշատակարանների, եկեղեցական սպասների ու զարդերի, ձեռագրերի, կաշուածական վաւերագրերի կն. կն. ցուցակագրութեան ժամանակ, ստանալով այդ ցուցակների վաւերական պատճէնները և ցուցակագրած իրերը, եթէ որ և է պատճառով անհրաժեշտ համարուին տեղափոխելու իրենց տեղերից ի պահպանութիւն և յապահովութիւն, փոխադրուին յատկապէս Մ. Աթոռ, նախապէս արկղների և կամ կապոցների մէջ ծրարելով, և այդ արկղներն ու կապոցները կնքելով Ձեր և պ. Տէր Աւետիսեանի կնիքներով, որպէսզի պահակներն այստեղ բերելու ժամանակ իրեղէններն անաղարտ հասցնեն այստեղ . . . »:



Գիտութեանց Ճեմարանի ներկայացուցիչն դեռ Վանայ շրջանը չգնացած՝ դժբախտաբար ստացուած է այդ շրջանի հնութիւնների մասին հետեւեալ տխուր տեղեկութիւնները ուղղուած Վեհափառ Հայրապետին, 10-նոյեմբերի 1915 թ., որ բերում ենք այստեղ.

«Նորին Ս. Սծուրեան Տ. Տ. Գէորգ Ե. Վեհափառ եւ սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց
ի Ս. Էջմիածին՝

*Լիմ Անապատի վանահայր Յովնաննէս վարդապետից
ամենախոնարհաբար տեղեկագրութիւն*

Ս. Օծութեանդ հայրական բարձր հրամանի համաձայն ողջամբ հասանք երկիրը և Լիմ անապատի կղզին մտնելով դռանք դայն աւերակ և կողոսդատուած վիճակի մէջ։ Եկեղեցւոյ և ամբողջ սենեկաց դռները խորտակուած, ձեռագիրներու ընտիր մասը վերցուած է. կը մնան ճառքնտիր յայսմաւուրքներ և մաս մը անարժէք ձեռագրեր։ Ժողովուրդէն կը տեղեկանանք որ անապատներն այս տխուր վիճակին հասցնող առաջին անգամ եղած են. *) որոնք մեր կղզիէն հեռանալէն զկնի, նաւով ներս կը մտնեն և եկեղեցւոյն ու սենեկաց դռները խորտակելով՝ շատ մը բաներ կը վերցնեն։ Իսկ մնացածն ալ վերագարձող ժողովուրդ շարաթներով ներս մնալով գողացած ու կողոսդատու է։

Կտուց անապատի ներսը ցարդ շենք կրցած մտնել նաւակ չըլալու համար։ Վարազայ վանք դացինք, ճիշտ Լիմ

*) Հնարաւորութիւն չունենք այստեղ առաջ բերելու անունները։
Իմր. Վարդապետ-ի.

Անապատի վիճակն ունէր, եկեղեցւոյ պատեր, յատակներ քանդուած, ու կողոպտուած էր, բարերադղարար զրադա-
րանի վերածուած եկեղեցւոյն մէջ, պահարան մը նկատի
լինելով միանգամայն՝ քանդիչներու աչքերէն վրիպած էր,
ուր պահուած կային ձեռագիր և տպագիր մատենաններ և
կարգ մը եկեղեցական իրեր: Վանայ Նահանգապետի
արտօնութեամբ և երկրապահ զօրաց հրամանատարու-
թեամբ պ. Արմենակ Եկարեանի օժանդակութեամբ վեր-
ցուցինք բերինք Վանը և զրադուած ենք գանձնք ցուցա-
կադրելով: Վանայ ս. Նշան եկեղեցիէն քանի մը ձեռա-
գրեր, որ ժողովուրդ ս. Թադէոս առաքեալին կը համարէ,
և ուրիշ եկեղեցական իրեր, Նահանգապետ պահած լինելով
շատ յարգանք մեզի ցուցուց յանձնելու հաճութեամբ
զորս պիտի ստանանք: Պիտի գանձնք միւս եկեղեցիներուն
ալ եղած ու գտնուածներն կրցածիս շափ ի մի հաւաքել,
ընդհանուր ցուցակ կազմելով՝ զրկել Զերդ Վեհափառու-
թեան: Վարադայ վանուց ձեռագիրներու ընկիթ կարգա-
դրութեան համար Ս. Օծութեանդ հայրական բարձր հրա-
մանին կսպասենք: Իսկ տպագիր մատենաններ կորուստէ
դերձ պահելու համար որոշած ենք կողիներէն մէկի մէջ
փոխադրել, և թէ արտօնուի Ս. Օծութեանդ կողմից:

Անոնք կարգադրելու համար մարդու և զրամի պէտք
կայ: Վանը և երկու անապատներու վիճակաց մէջ բաւական
թւով ժողովուրդ կը գտնուեն և հողեօրտական պակաս
լինելու համար զուրկ կը մնան կրօնական միօրթարութե-
նէն: Հացի համար չեն նեղուիր, կը նեղուին միայն ուրիշ
ուտեստեղինաց և բժիշկներու դեղի և դարմանի պակա-
սութիւններէն:

Գերապատիւ Այվատեան Սրբազանին սենեակը այ-
րուած էր, ուստի ոչինչ չգտանք:

Որով կը մնամք ընդ միշտ կարօտ Ս. Օծութեանդ
հայրական օրհնութեան և ամենախոնարհ որդի վանահայր
Լիմ Անապատի՝

Յովնաննէս վարդապետ Հիւսնան

(10 Նոյեմբերի 1945)

Վան

Վերոյիշեալ տեղեկութիւնները ստանալուց Վեհափառ Հայրապետի հրամանով հայրապետական Դիւանը երկու օր յետոյ 21 նոյեմբերի շտապ գրութիւն է ուղղում Լիմանապատի վանահայր Տ. Յովհաննէս վարդապետին՝ պատուիրելով նախ՝ «մնացորդ ձեռագիրների ամբողջական ցուցակը ուղարկել Նորին Վեհափառութեան՝ ապա յափշտակութիւնից ազատուած անխոր քոյոր ձեռագիրներն և միւս եկեղեցական հնութիւններն ապահով կերպով փոխադրել ու էջմիածին յանուն Դիւանիս»:

Միաժամանակ յանձնարարում է աշխատել տեղեկութիւններ ժողովել և ճշտել հետախոյզ, անուն ազգանունը և միւս հետախոյզների անունները, ինչպէս և ռւր են տարուած աւարած ձեռագիրներն ու հնութիւնները և հաղորդել Դիւանիս»:

Ինչպէս տեսնում ենք՝ ոչ թէ միայն հայ ժողովուրդն է ենթարկուել սոսկալի աղէտների, այլ և նորա հնադարեան ժառանգութիւն մնացած թանկագին պատմական յիշատակարաններն ու թանգարժէք հնութիւններն՝ այն էլ դժբախտաբար քարեկամ կարծեցեալ անարժան մարդկանց ձեռքով:

Բ. Վ. Ա.

